Հանրապետական Մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ՀՀ Տավուշի մարզի Բաղանիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Համատեղ դասավանդումը որպես ուսուցիչ-ուսուցիչ համագործակցության վառ դրսևորում

Վերապատրաստող, մենթոր՝ Աննա Անտոնյան

Ուսուցիչ՝ Անահիտ Պապինյան

2023

Բովանդակություն

1. Ներածություն.....էջ 3-5

2. Գլուխ 1.Համատեղ դասավանդման տեսակները.....էջ 6-10

3. Գլուխ 2.Դասղեկի և առարկայական ուսուցիչների համագործակցությունը

.....էջ 11-12

4. Գլուխ 3.Համագործակցությունը առարկայական մասնախմբերում....էջ 13-14

5. Գլուխ 4.Համատեղ ուսուցման առավելությունները .....էջ 15-17

6. Գլուխ 5. Իմ փորձառությունը .....էջ 18

7. Եզրակացություն.....19

8. Գրականության ցանկ 20

Ներածություն

Այժմյան մանկավարժին ներկայացվող պահանջները ոչ միայն ավանդական մեթոդների կիրառումն է,այլ նաև այնպիսի մասնագիտական որակների ապահովումը, որոնք նրան թույլ կտան ուսուցման և դաստիարակության մեթոդները հարստացնել՝ կիրառելով ժամանակակից փոխներգործուն մեթոդները:Կարելի է վստահաբար ասել,որ ուսուցչի համար չափազանց կարևոր նշանակություն ունի գործընկերների հետ համագործակցությունը:Սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ և փորձառու ուսուցիչների փորձը,այն նպաստում է, որ ուսուցիչն արդեն գործնականում պատկերացում կազմի առաջացած խնդրի վերաբերյալ:Ավելի փորձառու ուսուցիչների մեջ կան այնպիսիք,ովքեր առավել տեղեկացված են ,ավելի համարձակ դասավանդման մեթոդներ են կիրառում:Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում:Նրանք աշակերտի ըմբռնումն ու հմտությունը կարող են զարգացնել ՝ընտրելով դասավանդման համապատասխան մեթոդներ և միջոցառումներ: Այսինքն, օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել սկսնակ ուսուցչին ինչ-որ ճանապարհով գտնելու միջոցներ՝ նոր հմտությունների և կարողությունների ձեռքբերման:Կարող ենք փաստել,որ համագործակցումը,օրինակելի փորձի փոխանակումն ու փոխանցումը ուսումնական գործընթացը ավելի հարուստ և արդյունավետ է դարձնում:

Համագործակցային գործընթացում ուսուցիչների քննարկումները,կրթական նոր գործընթացների վերլուծությունը խնդրահարույց իրավիճակներից ելքերի որոնումը միտված է մեկ ընդհանուր նպատակի՝ սովորողի համար դասը դարձնել հետաքրքիր և այդպիսով բարձրացնել կրթության որակը:

<u>Հետազոտության նպատակը</u>-Ցույց տալ ուսուցիչների արդյունավետ համագործակցության կարևորությունը ուումնական պրոցեսը առավել հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար:

<u>Հետազոտության խնդիրը</u>-Ընդգծել և ցույց տալ այն եղանակները,որոնց միջոցով մյուս ուսուցիչների միջև տեղի են ունենում համագործակցություն և փորձի փոխանակում:

.Ներկայացնել համատեղ դասավանդման առավելությունները:

Հետազոտության հարց-Ինչպե՞ս է ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ նպաստում ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

<u>Հետազոտության թեմայի արդիականությունը</u> - Բոլոր բնագավառներում

գործընկերային առողջ մթնոլորտը, որը հենված է փոխօգնության, համագործակցության և օրինակելի փորձի փոխանցման վրա,իսկապես ոգևորիչ է:
Համատեղ դասավանդումը մոդել է, որը շեշտում է նույն թիմի ներսում բոլոր անդամների միջև համագործակցությունն ու հաղորդակցումը, ինչը ուղղված է բոլոր սովորողների կրթական կարիքները լրացնելուն:
Այս մոդելն ունի մի շարք առավելություններ՝ մասնագիտական հմտությունների փոխանակում, սովորողների կրթական կարիքները հասկանալու ավելի մեծ հնարավորություն, ընդհանուր կրթության շրջանակներում հատուկ կարիքներով սովորողների համար ավելի մեծ ծրագրային հնարավորություն, ինչը թույլ կտա նաև բարելավել այդ սովորողների հարաբերություններն իրենց հասակակիցների հետ, ինչպես նաև մասնագետների համար ավելի թեթև աշխատանքային մթնոլորտ կստեղծի:Սակայն կան մի քանի ընդհանուր պայմաններ, որոնց ճիշտ կիրառման դեպքում է միայն հնարավոր այս մոդելը արդյունավետ համարել: Դրանք են՝ համատեղ դասավանդող մասնագետների նպատակաուղղված համագործակցությունը, ադմինիստրատիվ աջակցությունը, միանման աշխարհայացքը և աշխատանքի կազմակերպման ճիշտ և բավականաչափ ընտրված ժամանակահատված:
Համատեղ դասավանդում է համարվում դասավանդման այն տեսակը, երբ երկու կրթական աշխատողներ աշխատում են միասին՝ սպասարկելով տարաբնույթ ընդունակություն ունեցող սովորողների հետ: Առավել հաճախ հանդիպում են հետյալ մասնագետների համատեղ դասավանդող թիմերը՝
.Հատուկ և ընդհանուր կրթություն իրականացնեղ դասավանդողներ,
.յուրահատուկ մասնագիտական ուղղվածության և հատուկ կամ ընդհանուր կրթության դասավանդողներ,
,երկու ընդհանուր կրթության դասավանդողներ,
.խոսքի/լեզվական խնդիրներ լուծող մասնագետ և հատուկ կամ ընդհանուր կրթության մասնագետ,
.սոցաշխատող և հատուկ կամ ընդհանուր կրթության դասավանդող
.այլ աջակցող մասնագետներ կամ կամավորներ և ընդհանուր կամ հատուկ մասնագետ
.ընտրովի առարկաների դասավանդող և ընդհանուր կամ հատուկ մասնագետ:
Նման խմբային գործունեությունն իրականցվում է նրա համար, որպեսզի սովորողների կրթական պահանջների բավարարումն ավելի արդյունավետ լինի: Այս խմբերը կարող են կազմված լինել երկարատև կամ կարճատև ժամանակահատվածի

հիմքերով՝ նրանք կարող են միասին աշխատել մեկ ուսումնական տարի կամ մեկ նախագծի, սովորողների մոտ կոնկրետ հմտության զարգացման որևէ կարճաժամկետ ծրագրի շրջանակներում:Կրտսեր դպրոցում այս մոդելի հիմնական առավելությունը ընդհանուր կրթական ծրագիր իրականացնող և հատուկ մանկավարժի համատեղ աշխատանքն է: Հատուկ կարիքներ ունեցոսղ սովորողներն այս դեպքում կունենան հատուկ մանկավարժական աջակցություն: Եթե երկու մասնագետները կարողանան համակարգված և հետևողականորեն աշխատել, ապա բոլոր սովորողների կրթական կարիքները լիարժեք կբավարարվեն:

Գլուխ 1

ՀԱՄԱՏԵՂ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Համատեղ դասավանդման մոդելը կարելի է դիտարկել որպես համագործակցային ուսուցման մեթոդ, որը շեշտում է նույն թիմի ներսում բոլոր անդամների միջև համագործակցությունն ու հաղորդակցումը, ինչը ուղղված է բոլոր սովորողների կրթական կարիքները բավարարելուն: Մերիլին Ֆրենդը և Լին Քուկը իրենց գրքում առանձնացնում են համատեղ դասավանդման 6 մոտեցումներ՝

1.***<u>Դասավանդող մասնագետ + ուսումնասիրող մասնագետ</u>*** Համատեղ դասավանդող մասնագետները միասին նախապես որոշում են, թե հետազոտական ինչպիսի նյութի համար են ուսումնասիրություն կատարելու և համաձայնեցնում են այն համակարգը, որով հավաքագրելու են այդ նյութը: Այնուհետ նրանք քննարկում են դա միասին:

2. ***<u>Դասավանդող մասնագետ + աջակցող մասնագետ</u>***:Այս մոտեցմամբ, երկուսից մեկը վերցնում է դասավանդման հիմնական պարտականությունը, մինչ մյուսը շրջում է լսարանում և ցուցաբերում միայն անհրաժեշտ աջակցություն սովորողներին:

3. ***<u>Զուգահեռ դասավանդում:</u>***Այստեղ երկու մասնագետներն էլ մատուցում են միևնույն նյութը, սակայն բաժանում են սովորողներին երկու խմբի և աշխատում միաժամանակ:

4. ***<u>Ուսուցման կենտրոնների տեղափոխման դասավանդում</u>*** : Այս մոտեցմամբ մասնագետները բաժանում են և սովորողներին, և մատուցվող նյութը: Յուրաքանչյուր դասավանդող մատուցում է նյութը խմբերից մեկին, իսկ հետո կրկնում պահանջը մյուս խմբի համար: Անհրաժեշտության դեպքում առանձնացվում է երրորդ խումբը, որն աշխատում է անկախ:

5. ***<u>Այլընտրանքային մոտեցում</u>*** : Այս դեպքում դասավանդողներից մեկն աշխատում է մեծ խմբի հետ, մինչ մյուսը՝ փոքր խմբի:

6. ***<u>Թիմային մոտեցում</u>*** :Այս դեպում երկու մասնագետներն էլ մատուցում են նյութ միասին և միաժամանակ:

Որոշ դասավանդողներ այս մոտեցումն անվանում են մեկ ուղեղ երկու մարմիններում: Շատերն էլ այս մոտեցումը համարում են ամենաբարդը, սակայն առավել արդյունավետ, և այն մեծապես կախված է մասնագետների դասավանդման ոճից:

Համատեղ դասավանդման դերակատարները

- ✓ Երկու և ավել դասավանդողներ,
- ✓ Հատուկ մանկավարժ , հոգեբան , սոց-մանկավարժ,
- ✓ Ծնող- աշակերտ,
- ✓ Առարկայական ուսուցիչները:

Համատեղ դասավանդումն ունի թույլ և ուժեղ կողմեր,որը պետք է հաղթահարել և ուղղորդել աշակերտներին, որպեսզի աշակերտները կարողանան գիտելիք ստանալ, իսկ ուսուցիչները հասնեն իրենց նպատակին: Ուսուցիչները կարծես ֆուտբոլիստներ լինեն, ովքեր պետք է կարողանան գնդակը միմյանց փոխանցելով գոլ խփեն՝ հասնելով իրենց նպատակներին::Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համատեղ դասավանդումը ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:Ուստի, այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն և ձեռքբերումները: Մանկավարժական նորարարությունը նոր, միջառարկայական ինտեգրված գիտական ուղղություն է,որն արտացոլում է փիլիսոփայական, սոցիա-լիոգեբանական, տեղեկատվական, մանկավարժական, մեթոդական և այլ ոլորտների ձեռքբերումները՝ լուծելու համար մանկավարժական գիտության և պրակտիկայի առաջ կանգնած ժամանակակից հիմնախնդիրներ:Մանկավարժական նորարարությունը ենթադրում է կրթական տարածքում նորամուծություններին ուղղված գործունեության և մտածողության առանձնահատուկ կազմակերպում կամ դրանց յուրացման, ներդրման ու տարածման գործընթաց:Այն դրսևորվում է կրթության ավանդական համակարգի արդիականացման, փոխակերպման, արդյունավետության ավելացման գործընթացներում:

Մանկավարժական նորարարությունը կարող է դիտարկվել որպես ուսուցման բովանդակության և կրթական գործընթացի կազմակերպական-տեխնոլոգիական հիմքերի նպատակաուղղված փոխակերպում, որն ուղղված է կրթական ծառայությունների որակի, կրթական հաստատությունների և շրջանավարտների

մրցունակության բարձրացմանը: Նորարարական կրթությունը հիմնված է մի շարք գործընթացների՝

• կրթության ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրման,
• ինտենսիվ գիտահետազոտական գործունեության,
• ուսուցման բովանդակության միջառարկայականության՝ ի տարբերություն ավանդական առարկայական մեկուսացվածության,
• ուսուցման և տնտեսության կարիքների հետ բուհական հետազոտությունների կապի վրա :

Համագործակցային ուսուցման երեք հիմնական մոդել կա.

ա) խորհրդատվական մոդել - այս մոդելում ուղղորդող ուսուցիչը հանդես է գալիս որպես խորհրդատու՝ ուսումնական պլանի հարմարեցման և փոփոխման, հմտությունների ձևավորման և գնահատման համակարգի մշակման գործում:

բ) Ուսուցման մոդելը - ուսուցման մոդելում ուղղորդող ուսուցիչը և ներառական դասարանի ուսուցիչը հերթով «սովորեցնում» են միմյանց ուսումնական ծրագրի իրականացման առանձնահատկությունները,դասավանդման որոշակի մեթոդների կիրառումը, գնահատման ձևերն ու տեսակները,այսինքն՝ այն խնդիրները,որոնց փորձագետ են իրենք համարվում:

գ)Համագործակցային (կամ թիմային աշխատանքի)մոդելը նախատեսում է պարտականությունների արդար բաշխում դասի պլանավորման, անցկացման և գնահատման գործընթացում: Հետազոտողների կողմից այս մոդելն ավելի ու ավելի է առաջարկվում որպես նախընտրելի մոդել, մասնավորապես՝ դրա արդյունավետության պատճառով երկու ուսուցիչների ներդրման համատեքստում առաջադրանքների և պարտականությունների բաշխման գործընթացում:

Համագործակցային մոդելի շրջանակներում համագործակցային ուսուցմանամենատարածված ձևերն են .

1. **Մեկը սովորեցնում է, իսկ մյուսը օգնում է:**

Այս մոտեցումը լայնորեն կիրառվում է ուսուցիչների կողմից: Հենց այդքան պարզ մոտեցմամբ արժե սկսել համատեղ ուսուցման գործընթացը, քանի որ այն համատեղ պլանավորման համար շատ ժամանակ չի պահանջում: Այնուամենայնիվ, այս մոտեցումը պետք է օգտագործվի զգուշությամբ, քանի որ եթե ուսուցիչներից մեկը մշտապես ստանձնում է միջնորդի դերը, դա կարող է նվազեցնել մեկ այլ ուսուցչի դերը և/կամ հանգեցնել նրա նկատմամբ վստահության կորստի: Դա կարող է նաև մեծացնել ուսանողների կախվածությունը ուսուցիչից, ով օգնում է:Առաջատար

ուսուցիչը որոշում է դասի բովանդակության կազմակերպումը,դասարանի և առանձին աշակերտների համար անհրաժեշտ հմտություններն ու մեթոդները դասի նպատակներն իրականացնելու համար:

2.Զուգահեռ ուսուցում

Այս մոտեցման էությունն այն է, որ երկու ուսուցիչներն էլ համատեղ պատասխանատու են պլանավորման և դասավանդման համար:Դասարանը բաժանված է տարբեր խմբերի, և ուսուցիչներից յուրաքանչյուրը դասավանդում է նույն ուսումնական նյութը: Ուսումնասիրվածի բովանդակությունը մնում է նույնը, բայց դրա ներկայացման մեթոդները կարող են տարբեր լինել: Երկու ուսուցիչներն էլ պետք է լավ իմանան աշակերտներին ներկայացվող բովանդակության մասին: Այս մոտեցումը պահանջում է համակարգման զգալի մակարդակ ուսուցիչների միջև, որպեսզի բոլոր աշակերտներն ըստ էության ստանան նույն ուսուցումը, և որ խմբերի ձևավորման որոշումը հիմնված լինի բազմազանության պահպանման պահանջի վրա: Քանի որ երկու ուսուցիչներն էլ պետք է լավ իմանան բովանդակությունը, այս մոտեցումը դժվար է օգտագործել համագործակցության սկզբում:Առաջատար ուսուցիչը և օժանդակ ուսուցիչները համատեղ կազմակերպում և վարում են դասը, որոշում խմբերի և առանձին ուսանողների համար անհրաժեշտ դասավանդման մեթոդները. աշակերտներին միավորել երկու խմբի և ինքնուրույն իրականացնել դասի պլանը խմբերից

3.Դասավանդում դասարաններում

Այս մոտեցման էությունն այն է, որ ուսուցիչները վերապատրաստման մի վայրից մյուսը տեղափոխվեն ժամանակացույցին համապատասխան:Նրանք կրկնում են վերապատրաստումը յուրաքանչյուր խմբի համար, որը գալիս է իրենց մարզման վայր: Ուսումնական նյութի ներկայացման բնույթը կարող է տարբեր լինել՝ կախված աշակերտների կարիքներից:Քանի որ յուրաքանչյուր ուսուցիչ ունի առանձին պատասխանատվություն դասավանդման համար, այս մոտեցումը կարող է կիրառվել, եթե ուսուցիչներն ունեն տարբեր մանկավարժական մոտեցումներ: Ուսուցիչները արդարացիորեն կիսում են պլանավորման և դասավանդման պարտականությունները:Առաջատար ուսուցիչը և օգնող ուսուցիչը կիսում են ուսումնական տեղերի քանակը, որոնց համար պատասխանատու են: Երկու ուսուցիչներն էլ պլանավորում և կազմակերպում են աշխատանքը իրենց տեղում՝ հաշվի առնելով խմբերի հնարավոր տարբերությունները:

Այս մոտեցման թերությունը կարող է լինել զգալի քանակությամբ շարժում և աղմուկ, որն առաջանում է դրանից, ինչը կարող է շեղել:

4.Այլընտրանքային ուսուցում

Այս մոտեցումը հիմնված է այն փաստի վրա, որ աշակերտների մեծամասնությունը սովորում է մեծ խմբով, իսկ նրանցից ոմանք՝ փոքր խմբերով (նախապատրաստման խորացված վերապատրաստման, վերակրթության կամ անհատական ուսուցման այլ ձևերի համար): Այս դեպքում ուսուցիչները կիսում են պլանավորման և դասավանդման պարտականությունները: Այս մոտեցումը թույլ է տալիս ավելի անհատականացված ուսուցման փորձ ձեռք բերել: Առաջատար ուսուցիչը և ուսուցիչը, ով օգնում է, որոշում են դասի բովանդակությունը և կազմակերպումը, որոշվում է լրացուցիչ պարապմունքների անհրաժեշտությամբ: Առաջատար ուսուցիչը վարում է դասի հիմնական մասը, իսկ օգնող ուսուցիչը գործ ունի ենթախմբերի կամ առանձին երեխաների հետ (դասից առաջ կամ հետո):

5.Թիմային ուսուցում

Թիմային աշխատանքի միջոցով ուսուցիչները քննարկում են ուսուցման բովանդակությունը, աշխատում են հմտություններ զարգացնելու վրա, քննարկում են նոր տեղեկություններ, որոշում դասի բովանդակության և կազմակերպման վերաբերյալ և մշակում ուսուցման և դասարանի կառավարման ռազմավարություններ: Առաջատար ուսուցիչը և ուսուցիչը, ով օգնում է դասավանդել ամբողջ դասարանը միաժամանակ, յուրաքանչյուրը կարող է իրականացնել հիմնական ուսուցումը: Մինչ մի ուսուցիչ բացատրում է, մյուսը կարող է ցուցադրել սլայդներ կամ տեսողական նյութեր:

Ուսուցիչները կիսում են պլանավորման և դասավանդման պարտականությունները: Այսպիսով, համատեղ աշխատանքի կազմակերպումը պահանջում բարձր կենտրոնացում, ուստի համատեղ աշխատանքից հարմարավետության և բավարարվածության մակարդակը պետք է բավականին բարձր լինի: Ուսուցիչների միջև պետք է լինի փոխադարձ վստահության և հարգանքի բարձր մակարդակ, նրանք պետք է պատրաստ լինեն համապատասխանեցնել իրենց ուսուցման ոճերը: Ուսանողների կողմից ուսումնական գործունեության ընթացքում ուսումնասիրվող նյութի ըմբռնումը կրթության ամենակարեւոր հոգեբանական գործընթացն է:

Գլուխ 2

ԴԱՍՂԵԿԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Առարկայական ուսուցիչների հետ աշխատանքում դասղեկը պետք է ստանձնի սովորողների և կոլեկտիվի հետ մանկավարժական աշխատանք կազմակերպողի և համակարգողի դեր:Դասղեկը պետք է կարգավորի ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունները, ուսուցիչներին իրազեկի ծնողների առանձնահատկությունների մասին, սովորողների դաստիարակության և առաջադիմության վերաբերյալ տեղեկությունների փոխանակման ,ինչպես նաև ծնողներին իրենց երեխաների տնային առաջադրանքներ կատարման վերաբերյալ օգնության նպատակով հանդիպումներ կազմակերպի ուսուցիչների և ծնողների միջև:

Դասղեկը առարկայական ուսուցիչներին պետք է կարողանա ընդգրկել ծնողական ժողովներին:Առարկայական ուսուցիչների հետ աշխատանքի ընդունված և հիմնական ձևը անհատական զրույցներն են, որոնք տեղի են ունենում ըստ անհրաժեշտության:Այսպիսի զրույցներ իրականացնելիս դասղեկը պետք է ուշադիր լինի ,որպեսզի ուշադրությունից դուրս չթողնի ուսուցչի՝աշակերտի հետ աշխատանքի կարևոր որևէ փուլ և կարողանա կանխարգելել հնարավոր բարդությունները:Նման զրույցները կարող են համատեղ մտորումների այս կամ այն խնդրի համար ելքի համատեղ որոնումների բնույթ ունենալ: Միևնույն ժամանակ դասղեկը պետք է ուշադիր լինի և խրախուսի առարկայական ուսուցիչների առաջարկները ,նախաձեռնությունները,ուշադրությամբ լսի վերջիններիս դիտարկումները:

Դասղեկի համագործակցությունը դասավանդող ուսուցիչների հետ արդյունավետ կազմակերպելու համար առաջարկվում է կատարել հետևյալ աշխատանքները .

- աշակերտնների ուսումնական գործունեության շարժառիթների ուսումնասիրությունը և դրանց հաշվի առնելը,
- ուսումնական գործունեության առաջընթացի ուղիների որոնումը,
- աշակերտների ուսումնական կարողությունների զարգացման աստիճանի բացահայտումը ,
- մանկավարժների և աշակերտների համագործակցությունը արտաուսումնական գործունեության ընթացքում,
- մանակավարժների օգնությունը աշակերտներին՝գիտելիքների բացը լրացնելու

նպատակով:

Ուսումնական տարվա սկզբում դասղեկը պետք է աշակերտներին ներկայացնի այն պահանջները,որոնք անհրաժեշտ են նրանց ուսման առաջադիմության համար:

Այդ նպատակով դասավանդող ուսուցիչները կարող են աշակերտների համար հատուկ գրառումների տետր պատրաստել:Այդպիսի գրառումները օգտակար են հինգերորդ,վեցերորդ դասարանի աշակերտների համար,որոնց առաջադիմությունը կտրուկ ընկել է:Տարվա սկզբում դասղեկը ուշադրություն պետք է դարձնի վատ վարքի տեր աշակերտների վրա:Երեխաների վատ պահվածքը կարող է կապված լինել ընտանեկան խնդիրների,երեխայի առողջության ,հաղորդակցման դժվարությունների և բնավորության առանձնահատկությունների հետ:Դրա համար դասղեկը կարող է դպրոցի ղեկավարության հետ համատեղ կազմակերպել և անցկացնել քննարկումներ մանկավարժների հետ <<Իմ դասարանի դժվար երեխաները >> թեմայով :

Խնդրահարույց աշակերտների հետ տարվող աշխատանքները կազմակերպելիս անհրաժեշտ է.

- Երեխաների ծնողներին հրավիրել անհատական ու թեմատիկ զրույցների:
- Այցելել երեխաների ընտանիքները,ուսումնասիրել նրանց կենցաղային պայմաններն ու ընտանեկան դրությունը:
- Երեխաների համար կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ,դասընկերների օգնություն
- Ներգրավել աշակերտներին ֆակուլտատիվների և խմբակների աշխատանքներին:
- Ներգրավել երեխաներին առարկայական միջոցառումների և երեկույթների կազմակերպմանը:
- Անցկացնել թեմատիկ դասղեկական ժամեր:
- Անհատական զրույցներ ունենալ դասավանդող ուսուցիչների հետ և այլն:

Գլուխ 3

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՄԲԵՐՈՒՄ

Մեթոդական միավորումների աշխատանքը բազմաբնույթ է:Այն միտված է ուսուցչի մասնագիտական որակների բարձրացմանը՝ խրախուսելով կոլեկտիվում աշխատելու և համագործակցելու վերջինիս ցանկությունը:Մեթոդական միավորման ներսում բոլոր անդամներն ունեն հավասար իրավունքներ:Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են:Մանկավարժական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական որակների բարձրացումն է:Այստեղ իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին համակարգել իր ողջ մարդկային ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով:Դպրոցի գերխնդիրն է կոմպետենտ մանակավարժ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին,կրեատիվ է,կողմնորոշվող,անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները:Բերենք մեթոդական միավորման ներսում ուսուցիչների համագործակցության մի քանի իրավիճակային օրինակներ:Բնագիտական առարկաների մեթոդական միավորման նախագահը մեկ այլ ուսուցչի հետ ներկայանում է սկսնակ ուսուցչի դասին, որպեսզի իրականացնի փոխադարձ դասալսում: Դասալսման նպատակն էր ստուգել սովորողների մասնակցությունը դասին: Արդյունքում արձանագրվում է, որ սովորողների հիմնական մասը դասին պասիվ էր կամ ոչ ուշադիր, այլ խոսքով՝ դասը չէր ծառայում նպատակին, և ուսուցիչը դասի ավարտին չկարողացավ հասնել չափորոշչային պահանջներին: Անշուշտ, պետք է հետևողական լինել, որ արձանագրված խնդիրը ստանա համապատասխան լուծում, ուսուցիչը հասկանա՝որտեղ է իր բացթողումը և իրավիճակը շտկվի: Այդ նպատակով գումարվում է արտահերթ մեթոդական միավորման նիստ՝ սահմանելով հետևյալ օրակարգը.

• Ուսուցիչները պետք է հանդես գան դասի ընթացքում մեթոդների կիրառման իրենց փորձի մասին մեթոդական զեկույցներով;

• Զեկույցները պետք է ներկայացվեն սահիկաշարի օգնությամբ

•Քննարկման միջոցով պետք է պարզաբանվեն մեթոդների կիրառության առավելություններն ու թերությունները՝ հենվելով կոնկրետ օրինակների վրա;

• Փորձառու ուսուցիչները պետք է ունենան ելույթներ՝ դասի տիպերին, փուլերին վերաբերվող;
• Տեղում պետք է կատարվեն առաջադրանքներ:

Ստացվեց, որ մեթոդական միավորման նախագահը, պահպանելով մանկավարժական էթիկան, խնդրին տվեց համակարգային լուծում: Անշուշտ, կոնկրետ ուսուցիչը ծանոթացավ դասալսումների մատյանում արված արձանագրությանը, միավորման նախագահի հետ քննարկեց, վերլուծեց իր բացթողումները:

Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ եկանք եզրակացության, որ ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է, որում մանկավարժական կոմպետենտությունը սահմանվում է որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների և մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային և մասնագիտական իրավիճակներում:Ինչպես նաև արձանագրեցինք,որ ուսուցչի մասնագիտական որակների բարձրացման համար անգնահատելի է համագործակցությունը գործընկերների հետ՝ ինչպես ուղիղ, այնպես է առարկայական մասնախմբերի աշխատանքների շրջանակներում:

Գլուխ 4

ՀԱՄԱՏԵՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համատեղ ուսուցումը փոխում է աշակերտի և ուսուցչի դերը դասարանում: Դասավանդման և ուսուցման ղեկավարումը բաժանվում է աշակերտների խմբերի կողմից (միջև): Աշակերտները ավելի շատ հնարավորություն են ստանում սովորելու, հարցնելու, միմյանց հետ կիսվելու, ինչպես նաև քննարկելու իրենց գաղափարները: Համատեղ ուսուցումն օգնում է աշակերտներին ներգրավվելու բանավեճի և քննարկել տարբեր հեռանկարներ:

Ինչքան էլ հին կրթական համակարգը մեզ ավելի հոգեհարազատ լինի, միևնույնն է նոր կենսակերպը, կյանքի նոր ռիթմը, տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը առաջ են քաշում նոր պահանջներ ու խնդիրներ, որոնք հաճախ հին մեթոդներով անհնար է լինում վերջնականապես հաղթահարելի դարձնել գոնե աշակերտների մեծ մասի համար: Ինչն էլ պատճառ է դառնում , որ ուսուցիչը պրպտի, գտնի այնպիսի նոր գործիքներ ու մեթոդներ, որոնք միաժամանակ կհետաքրքրեն և կստիպեն երեխաներին մտածել և գտնել ճիշտ լուծումներ նրանց առջև ծառացած խնդիրների համար:

Այս տիպի դասերի ընթացքում երեխաների մոտ առաջանում են վստահության, հանդուրժողականության, փոխզիջման և փոխօգնության հմտությունների վրա հիմնված ընկերական հարաբերություններ:Չէ՞ որ այս տեսակ դասերին նաև խմբային աշխատանք տանելու արդյունքում է,որ երեխաները դրսևորում են իրենց լավագույն հատկությունները, որպես ապագա հոգատար, խելացի, կամային հայրենիք կերտողներ :Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ մեծացել է նաև սովորողների հետաքրքրությունների շրջանակը:Սովորողի բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիարակության իրականացումը դժվար է պատկերացնել առանց միջառարկայական կապերի օգտագործման, առանց սովորողների հետաքրքրությունների բարձրացման: Ուստի այսօրվա կրթական համագարգում անչափ կարևորվում է միջառարկայական կապերի տեղն ու դերը:

Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկը մյուսի համար հիմք ու ելակետ է:Հետևաբար սովորողներին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռող նշանակություն ունեն վերջիններիս աշխարհաճանաչողության համար:

Եթե միջառարկայական կապերը հեշտ ու տեղին,չափավոր ու նպատակային

չօգտագործվեն, ակամա դրանք կարող են դասի պրոցեսի հիմնական մեխը դառնալ և դասի բուն նպատակը մղել երկրորդ պլանի վրա,դարձնել անկարևոր, ուստի այս գործընթացում անչափ կարևոր է ուսուցիչների կշռադատված ու նպատակաուղղված համագործակցությունը:

Ինտեգրված դասերի կազմակերպման ընթացքը բավականաչափ արդյունավետ կարող է լինել մասնակից ուսուցիչների համար: Սա համագործակցման ու փորձի փոխանակման անմիջական գործընթաց է, որի ժամանակ բոլոր ուսուցիչները հավասարաչափ ջանք են գործադրում, որպեսզի ուսուցման գործընթացը լինի ապարդյունավետ: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակ տեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը:Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ, որը նպաստում է ուսուցանվող նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը:

Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ:

Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Այստեղ շատ կարևոր է ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումը,քանի որ նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության արդյունավետությունից է կախված ինտեգրված դասի որակը:

Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը:Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները,պետք է կատարվեն այնպիսի գործողություններ,որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում առանցքային նշանակություն ունեն ուսուցիչների համագործակցելու, իրարից սովորելու, ընդհանուր նպատակներ ու խնդիրներ գտնելու կարողությունները:Նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է՝

. ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,

• համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,

• ինտեգրման ձևը,

• միավորվող նյութերի միջև կապերի բնույթը ,

• նյութի հաջորդականության կառուցվածքը,

• նյութի ներկայացման միջոցները,
• դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,
• տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:

Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին,որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»: Միջառարկայական կապեր գոյություն ունեն հատկապես տեխնոլոգիա, մաթեմատիկա, երկրաչափություն, կերպարվեստ, ֆիզիկա առարկաների միջև: Այդ առարկաներից յուրաքանչյուրի ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ունակությունները և հմտությունները լայնորեն կիրառվում են մյուս առարկաների ուսուցման գործընթացում:Այստեղ կրկին պետք է կարևորենք ուսուցիչների փոխգործակցությունը, մի նպատակի համար կոլեկտիվ աշխատանքը :

Կրթության կարևորությունը գնահատելով՝ պետք է ընդունենք, որ կրթության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության, հոգևոր-բարոյական և մշակութային արժեքների զարգացման: Ինտեգրված ուսուցումը, ապահովելով տարբեր առարկաների գիտելիքների համակցումը,նպաստելու է հետազոտական հմտությունների, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և դրանց հիմքի վրա նրանց կայուն զարգացման իրականացանը: Չմոռանանք, որ ուսուցման այս տեսակը կարելի է համարել հաջողված միայն մանկավարժական առողջ համագործակցության արդյունքում:

Գլուխ 5
Իմ փորձառությունը

Այսօրվա կրթական համակարգը լայն հնարավորություն է ընձեռում ոչ միայն ուսուցիչների համար՝նոր մեթոդներ սովորելու,փորձարկելու և կիրառելու համար,այլ նաև հետաքրքիր է դառնում նոր սերնդի համար:Այս հետազոտական աշխատանքում արտահայտած մտքերը ի մի բերելով՝ կարելի է ասել,որ լավ արդյունքներ եմ գրանցել որպես ուսուցիչ՝գործածելով համագործակցային մեթոդը:Համատեղ դասավանդում եմ իրականացրել քիմիայի ուսուցչի հետ:Միասին անցկացրել ենք<<Էլեկտրական հոսանքի քիմիական ազդեցությունը>>(Էլեկտրոլիզ) թեման ինների դասարանում: Աշակերտներին հետաքրքիր էր լսել նույն թեմայի բացատրությունը երկու ուսուցիչներից,երկու տարբեր տեսանկյուններից:Թեմայի նպատակն էր՝

- Աշակերտներին ծանոթացնել էլեկտրական հոսանքի ազդեցություններին:
- Էլեկտրոլիզի միջոցով ուսումնասիրել էլեկտրական հոսանքի քիմիական ազդեցությունը:
- Էլեկտրոլիզի միջոցով որոշել էլեկտրոնի լիցքը:

Դասի ընթացքում քննարկեցինք էլեկտրական հոսանքի ազդեցությունները,ապա փորձի միջոցով որոշեցինք ամրապնդել ստացված գիտելիքները:Փորձի համար մեզ անհրաժեշտ էին հետևյալ սարքերը՝ հոսանքի աղբյուր, ռեոստատ. ամպերմետր, էլեկտրոլիզի ապարատ,վայրկյանաչափ,կշեռք: Սարքերը աշակերտների օգնությամբ միացրեցինք հաջորդաբար,էլեկտրոդները իջեցրինք պղնձարջասպի լուծույթի մեջ,միացրինք սարքը էլեկտրական հոսանքին,ֆիքսեցինք միացման ժամանակը:Քիմիայի ուսուցչուհին բացատրեց ընթացող իոնափոխանակային ռեակցիաները.

$$Cu^{2+}+2e^{-} \longrightarrow Cu$$

Նախօրոք կշռել էինք բացասական բևեռին միացրած էլեկտրոդը,ապա փորձից հետո կրկին կշռեցինք,այդ երկու արդյունքները իրարից հանելով ՝որոշեցինք անջատված պղնձի զանգվածը:Փորձն ավարտելուց հետո որոշեցինք էլեկտրոնի լիցքը:Աշակերտները իրենց կատարած փորձով դիտեցին էլեկտրոլիզի երևույթը և ստացան էլեկտրոնի լիցքի մոտավոր արժեքը:Փորձը հաստատեց տեսական գիտելիքները:Համատեղ դասավանդումը ավելի նպատակաուղղված էր և արդյունավետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչքան էլ հին կրթական համակարգը մեզ հոգեհարազատ լինի,միևնույնն է՝կյանքի այժմյան տեմպը,նոր տեխնոլոգիաների կտրուկ զարգացումը առաջ են քաշում նոր պահանջներ ու խնդիրներ:Վերջիններս հաճախակի անհնար են լինում լուծել հին մեթոդներով:Սրա հետևանքով ուսուցիչը սկսում է փնտրել նոր մեթոդներ, միջոցներ,որոնք աշակերտների մոտ հետաքրքրություն կառաջացնեն,կներգրավեն դասի պրոցեսին: Այս տիպի դասերի ընթացքում երեխաների մոտ առաջանում են վստահության, հանդուրժողականության, փոխզիջման և փոխօգնության հմտությունների վրա հիմնված ընկերական հարաբերություններ :Երեխաները կսկսեն դրսևորել իրենց լավագույն մարդկային հատկանիշները,չէ որ նրանք են մեր վաղվա օրվա կերտողները:

«Համատեղ դասավանդում» թեմայով հետազոտական աշխատանքը գրելիս կարևորեցի երկու կամ ավելի մանկավարժների կողմից ընդհանուր տարածքում հավասար պատասխանատվությամբ իրականացվող ուսուցման պլանավորմանը, աջակցող, զուգահեռ, թիմային և այլընտրանքային մոդելներով դասերի մատուցման և գնահատման մեթոդները: Դասավանդման արդյունքում ուսուցիչների նպատակն է արդյունավետ ուղիներով կարողանալ բավարարել սովորողների բազմազան կարիքները: Ընդ որում՝ համատեղ դասավանդման գերագույն նպատակն է համատեղել և ընդլայնել յուրաքանչյուր մասնագետի փորձագիտությունը՝ ի շահ բոլոր սովորողների և պլանավորել ու ստեղծել հատուկ մշակված ներառման մշակույթ դասարանում և դպրոցական համայնքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://rosopeka.ru/articles/2887/85912/

2. Հոդված, Սոնա Կուրղինյան <<Համագործակցային ուսուցման մեթոդները>>

3.Գիրք <<Համագործակցային հմտություններ դպրոցում դասավանդողների համար>>, Մերիլին Ֆրենդ, Լին Քուկ

4. Johnson, D., Johnson, R. (1999)

5.Ն. Մանուկյան, Զ. Գևորգյան, Ռ. Թար, Ա. Չափման, Թ. Սաղդասարյան << Գիրք պատմության ուսուցման. ինչու՞, ինչպե՞ս>>, << Պարադիգմա>> կրթական հիմնադրամ, Երևան 2020թ.

6.Գ. Էդիլյան: «Անտիպ էջեր», Երևան, 1988թ

7.Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները/Ձեռնարկ

8.Ժամանակակից մանկավարժական մեթոդներ

9.Ն. Հակոբյան , Ս. Գևորգյան, Ա. Հովհաննիսյան, Ա, Դավթյան/ Մանկավարժական հաղորդակցում